ջեցուցէր ծովուն այն լուսապայծառ անդունդը՝ ուր մարգրիտները կ'օրօրուին և բուստերը լուսեղէն ծաղիկներով հանդարտօրէն կը ծաղկին. օրհնեալ ըլլաս, սիրելի՝ Գառնիկ...

Մեզի կը մնայ յաջողութիւն մաղթելով քաջալերել Պ. Գլընճեանը որ ապագային թէ՛ մեզի և թէ Եւրոպացւոյն երգէ վրաստերով խոցուած հայ կեանքը։

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

Ի ՄԱՀ

ՊՕՂՈՍԻ ՄԻՍԹՃԵԱՆ

Ճրագ և խունկ վառեցան դագաղիդ շուրջ. աղօթքներ երգեցին. և կարծես թէ դու չե՛ս լսեր անգամ, այնչափ լուռ ես, անշարժ, անձայն։

Անյիշատակ ժամանակներէ ի վեր՝ մեռելոց համար երբեմն հուր և զոհ կը մատուցանէին. մերթ պտուղներ ու քաղցրահամ ուտելիք կը դնէին գերեզմանին վրայ՝ հաւատալով որ մեռեալն պիտի ճաշակէ զանոնք։

Խունկ կը ծխեն, հրագներ կը վառեն. մեռելական սեաւ մթութի՛ւնն փարատելու՝ թէ քաղցրաբոյր ինկին մուխով՝ աչքերդ շլացնելու համար։

Մերթ գուսանք ու պարիկներ կ'երգէին, կը պարէին։ Որպէս ուրախութեան հանդէսի մը՝ շեփոր, թմբուկ, փանդիռն կը նուագէին։

Եւ կը վառին հրագներ. և սրբագործ կրակը, պաշտելին ի հնումն ի յաւետ և ամէն կրօնի, կը գալարէ իւր վրայ և կը հալի իւր վրայ խունկն՝ սփռելով պատկառելի, խորհրդաւոր և մտայոյզ բոյր մը... խո՛ւնկի բոյր, անոր կը կարօտի աղօթքն վերանալու համար...։

Եւ այժմ ջերմանոցի գեղանի՝ այլ վառամեռ ծաղիկներ կը դնենք դագաղիդ, հաղակոյտիդ վրայ։ Ա՛ւր էր թէ երիցուկի ափ մը հունտ ցանէի հողիդ վրայ...։

*

Ողբերգակ տեսարան, որ կատարեցիր դերդ այս աշխարհի վրայ։ Եւ միթէ դերդ աղէ՛կ կատարած ըլլալուդ համար է քեզ նուիրած փունջս, որ տժգոյն ու դալկահար՝ կ'երեւիս գոցուած վարագոյրին ծայրէն բանալով...

— « Բա՛հ հոս արգանդ արգասաւոր
« վայրի ծականց ու խոտերու։ Ձիւնէն,
« մրրկէն ալ, ինչպէս կիգիչ արեւէն՝ կեանք
« կ'առնուն ասոնք։

« Ես պիտի ինամեմ անոնց արմատներն։ Ամառուոյ ինձ բաժին թափած
« անձրեւէն խնայելով՝ տապին պիտի ո-
« ռոգեմ զանոնք։ Գիտես թէ որչափ կը
« սիրեմ վայրի ծաղիկներն։ Պիտի գրա-
« գիմ. այս ալ իմ հաճոյքս, իմ գործս
« պիտի ըլլայ։

« Նրբահիւս թիթեռնիկներ պիտի թռցնեմ. — հատ մ'ալ յատկապէս գիշերն
« աշխատութեանդ ժամանակ պիտի խբբ-
« կեմ եռ՝ գայ հրագիդ զոհել ինքզինքն։

« Բզզող ճճիներ պիտի ստեղծեմ. ա-
« նոնց սերմն ալ ձմրան — կենդանի մարմնոց սերմն ալ ձմրան — գուրգուրանօք պիտի
« ծածկեմ, պահեմ։

« Որչա՛փ զբաղում ունիմ. — յաւիտեանական անանց ժամանակն ինչո՛վ պիտի
« անցանէ։

« Ա՛լ գարշանք չ'եմ զգար։ Եւ կը զարմանամ իսկ թէ ես ալ ինչպէ՛ս կը սոսկամ կամ կը գարշիմ եղեր՝ տեսակ տեսակ
« որդերէ՝ որոնք անբաժան ընկերներս են
« ալ...։ Իմ մարմնոյս վրայ կը գրկեմ
« զանոնք. հիմայ խայթերնին համբոյր է,
« թոյներնին կաթ ու մեղր »։

*

— Խօսէ՛ ինձ ո՛վ հոգի, խօսէ՛. միսի թարութիւն մը տուր ինձ։

— « Պիտի շողեմ, պիտի պտտիմ. ա-
« ռանց մրսելու, առանց հոգնելու, առանց
« անջրպետ զգալու։ Պիտի գամ, պիտի
« երեւիմ. գիշերն երագիդ, արթնութեանդ՝
« բոլորովին տարբեր մտածմանց մէջ, ու-
« բախութեան կամ տրտմութեան մէջ ե-

digitised by A.R.A.R.@

« դած վայրկենիդ անգամ՝ պիտի գամ
« յանկարծ մտացդ դուռն բաղխելու։

« Պիտի երևիմ. միայն թէ թափանձիկ
« պիտի ըլլամ, իբրև շուք մը, ստուեր
« մը, իբրև օդն որ չի բռնուիր, չի շո-
« շափուիր՝ այնպէս պէտք եմ ըլլալ։

« Դարելի, հնարին չ՝է ինձ գաղտնիքն
« ընել. ի զո՛ւր պիտի հարցնես. ուզած
« ենթադրութիւնդ ըրէ, այլ միշտ սխալ
« պիտի ըլլայ...։

« Եւ կը զարմանա՛մ. ի՞նչ պէտք է ա-
« ճապարել հասկնալու գաղտնիք մը՝ որ
« շատ շուտ պիտի խնացուի՝ փոխադար-
« ձաբար ինքն ալ ուրիշի մը գաղտնիք
« մնալով։

*

« Հեռի՛, լուռ մնացի քեզ համար, ի-
« ցի՛ լսէիր ինչե՛ր կ՝երգեմ, ինչե՛ր կը
« խօսիմ և ի՞նչ գեղեցիկ ձայն մը ունիմ
« այժմ։

« Դրնա՞ս երկչո՛տ, կրնա՞ս չի մեռած,
« դեռ կենդանի, գիշեր մը գալ այս վայ-
« րերն. գիտեմ, կը վախնաս. քեզնէ շատ
« քաջերն ալ կը սոսկան. ինչպէս ես ալ
« երեկ՝ մտածելով իսկ կը սարսռէի...
« ի՞նչ խենդութիւն։

« Հող էիր և ի հող դարձցիս։ Ինծի
« վայրկեննուս գիտէինք զայս. ինչպէ՞ս
« կ՝ըլլայ որ մարդ իւր բուն երթալիք
« վայրէն կը սոսկայ...։ Վրան կը բաղձայ
« մնալ կանգուն մը վար, ի՞նչ տարբե-
« րութիւն։

« Ցերեկն արև չի՞ պիտի տեսնէ հոս.
« որչա՛փ սխալ։ Աշխարհի վրայ տեսած
« լոյսդ բան մը չէ՝ ինչ որ կը լուսաւո-
« րուի հոս։

« Գիշերն ալ հոդ, մարդ մինչև քունը
« գայ՝ հրաց կը վառէ, լոյս կը փնտռէ.
« իսկ հոս մթութիւնն լոյս է, հոս խա-
« ւար չի կայ։

*

« Որչա՛փ շարժմունք. ամենէ մեծ քաղ-
« քի մը մէջ՝ շոգեկառաց, ձիերու և ան-
« համար բազմութեան, մարդոց ու կեն-
« դանեաց հանած ժխորն, աղմուկն՝ պար-
« զապէս լռութիւն է՝ ինչ որ շշուկ ու
« շռինդ կը ծփայ հոս։

« Հոդ կենդանիք կը պոռան, կը խօ-
« սին, կ՝երգեն։ Երևակայէ անթիւ ան-
« համբ բիւր բիւրեր հոս։

« Եւ քուն չի կայ այս յաւիտենական
« կարծածդ քնոյ մէջ։

« Հոս, անտեսանելի հիւլէն՝ ինչպէս
« անշմարելի մազի չափ նուրբ արմատի
« մը թելն անգամ՝ կը խօսին, կը գործեն։

« Հոս, թոյնն՝ կենսատու հիւթ մը կը
« դառնայ. հոս, դիակի մը գարշելի
« հոտն՝ վարդի մը հիսաքանչ բոյր։

« Ամի մը հողին մէջ՝ հացտու ցորենին
« հատիկին հետ՝ հազարաւոր ճճիներու
« վոհմակներ, բոյսեր ու խոտեր՝ և հա-
« զարապատիկ մեծ՝ օձի մը սաղմն ալ
« կը պարփակուի։

« Այս մէկ ափ հողին մէջ՝ այնչափ
« այլազան, այլազգ շարժմունք, կեանք,
« փոյթ ու նպատակ կայ՝ որչափ հոտ
« ամեն գործարաններն միացած, հազա-
« բաւոր աշխատաւորներով՝ չ՝են բաւա-
« կանաւոր խոպան կարծած չափ մը հո-
« ղին հաւասար արտադրել։

« Հատիկ մը հողն՝ ինքնին այնչափ
« ոյժ ունի՝ որչափ չ՝սպառիր ելեկտրա-
« կանութիւն, ածուխ և կենդանի ջղերու
« ոյժեր երկրի վերայ։

« Հոս, այնչափ արագութիւն մէկ ակն-
« թարթի մէջ՝ որչափ սրընթաց կառա-
« խումբեր՝ դարերու մէջ չ՝են հաւասարիր։

« Հոս բոյսին ալ, կենդանիին, թռչու-
« նին, մարդուն ալ այլազան լեզուներն՝
« միևնոյն նշանակութիւնն ունին։

*

— Կը փնտռե՞ս այս աշխարհն։

Կը զսպէ հառաչ մը. և գլխիկոր, կը
շիկնի, կ՝ակնածի, կ՝ամաչէ արցունքին
կաթիլէն որ սահեցաւ աչքերէն։

— « Հող էիր և ի հող դարձցիս...»

« Զորս բառեր. և այդչափ դիւրին, այդ-
« քան հեշտ կը կարծես...։

« Դարեր առաջ հոս մտնողներ՝ տա-
« կաւին դարեր պիտի սպասեն քայքա-
« յուելու, փշրուելու համար։

digitised by A.R.A.R.@

« Դանդաղ, կամաց կ'երևայ քեզ այս.
« մինչդեռ հոս, այս յամրաշարժութեան
« մէջն է արագութիւն. վասնզի հոս ժա-
« մանակն, միջոցն՝ նշանակութիւն չ'ունի։
« Հող էիր և ի հող դարձցիս...»։
« Առ ափ մը հող՝ արիւն շինէ. առ ափ
« մը հող՝ լեարդ, սիրտ, աչք, ջիղ, մազի
« մէկ թել մը շինէ...
« Ասոնք նորէն պէտք է հող դառնան.
« մէկիկ մէկիկ քակուին, փշրին, իրենց
« նախկին վիճակին վերածուելու համար։
« Հոս ահագին ստամոքս մ'է, որ ան-
« դուլ կ'որոճայ ու կը մարսէ։

*

« Եւ ի՞նչ շարժում, վարն, խորն...։
« Գեաներ կը թաւալին՝ անցնելով կրակ-
« ներու մէջէ՝ առանց բռնկելու. և ան-
« ծախ կրակն կ'այրի բոցաճաճանչ գե-
« տերու մէջէ՝ առանց մարելու։
« Ի՞նչ հիաքանչ գործունէութիւն։
« Ժայռեր, երկաթներ, պղինձներ, ոս-
« կի, աղամանդ՝ խանձարուր կը կապեն,
« կեանք, մնունդ կ'ստանան։
« Հունտի մը հատիկն հոս, վերն, քո-
« վիկս՝ երկունքի մէջ է, ինչպէս խորն
« ափշ հեղուկ մը՝ որ երկաթին սաղմն է։
« Մեծայարգ ոսկին տեսնես՝ որ սրտի
« մը երակներն — ի՞նչ բաբախումներ ու-
« նեցած է երբեմն — մէկիկ մէկիկ քա-
« կուելով՝ արագ արագ կը սահին անոր
« սրբանն։
« Աչքեր՝ որոց շառաւիղք կը լուծուին՝
« աղամանդին, ուղեղն՝ կայլակ կայլակ
« կը վարատի անդիկի գործարանն...։
« Մամուկի ոստայնին պէս՝ կը սահին ա-
« մենքն իրենց վայրն։

*

« Լեզուս — այսինքն քու լեզուդ —
« չփոթի պիտի խօսի, ականջդ չփոթի պի-
« տի լսէ խօսքերս, և չի պիտի կարե-
« նամ խօսիլ քեզ անկարելին։
« Կը յիշեմ. շատ անգամ և ես խոր-
« հած, մտածած եմ թէ ի՞նչ է մահն,
« որպէս ի ծագէ աշխարհի մտածած են
« մարդիկ։
« Սակայն, ըսեմ. Աստուած գաղտնիք
« մը ըրաւ զայն, և որչափ արդար ու
« ճշմարիտ։ Ո՞ր հարսն պիտի փափաքէր
« աչքի մը արցունքն — թերեւս նախահօրն
« կամ իրեն պէս աղջկան մը արցունքն՝
« — կուրծքին վրայ զարդ մը դնել... Ո՞վ
« պիտի ուզէր զգացած, հառաչած, մա-
« շած արտերու արգասիք՝ մեռաղ մը գոր-
« ծածել, սիրել, պաշտել....
« Ո՞վ պիտի ուզէր ուրախութեան գի-
« նին արբենալ՝ երբ ողջոյնն ամեն մէկ
« հատիկին՝ թէ քաղցրահամ դեղձի մը
« կեղեւին տակ պարունակած հիւթն՝ գետ-
« նար թէ ի՞նչպէս այն նուրբ մաշկին
« մէջ՝ շիթ առ շիթ, չոր փայտէ մը վե-
« րանալով, ծծուելով կը կազմուի, որոնք
« ինչ՞ը են և ի՞նչպէս կը ժողովուին այդ
« կաթիլ կաթիլ հեղուկներն...։

Ռ. Ց. Փ.

Շարայարելի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անդրիկեան Հ. Ներսեհ. — Անանքէ (վէպ) . 337

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՄԱՐԱՆ

Հ. Ղեւոնդ Ալիշան. — Օրագիր առաջնայն ազգ-
մանց մասց և սրաի (1842) 351
Տաղաւարեան Ն. — Բլբուլագիծ պատմութեան
Հայոց ի սկզբանէ մինչ զԱրշակունի Հարստութիւնն. 353
Նանապետեան Հ. Գ. — Ղազար Փարպեցոյ
մասին (Ա՛ Արշաւ) 357
Պոտուրեան Հ. Մ. — Լուսաթել Սինեցւոյ Նո-
բրագիր տաղեր (Երգ վասն Լուսաւորչեան) . . 359

ԳՐԱԿԱՆ

Հ. Արսէն Ղազիկեան. — Դիդիէ մահը «Վիր-
գիլիոսի Ինէիական»էն թարգմ. 361
Տիրոյեան Հ. Ա. — Մենամարտ Տանկրեդի և
Ալդանտի (Ալտասուն Երուսաղէմէ, Երգ ԺԹ.)
«Ֆասսոյ Տորկուատոյ» թարգմ 364
Ալաւոնի. — Սեւ ծովին (բանաստեղծ.) . . 369
Մուրը Թոմման. — Քաղցր քնարն իմ հայրե-
նեաց (բնստ.) թարգմ. Տ. Ե. Ա. . . . 369
Հ. Մ. Վ. Սահակեան. — Գաղանիք վէնետ-
կոյ. պատմ. վէպ 370

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ակոլ. Նոր Մատենագիր. Հ. Ա. Ղազիկեան. 378
Պոտուրեան Հ. Մ. — Աւանչին Քայլ ի Գրոց
բարբառ Հ. Թ. Թոմմասեանի. — Հայկական Օրոր. 381

ԱՑԼ ԵՒ ԱՑԼԳ

Ի Մահ Պօղոսի Միսքճեան. — Խոհք . . 382
Իմաստաներ 351

digitised by A.R.A.R.@